GABRIELYAN GUZH 3901890254
Digitally signed by GABRIELYAN GUZH 3901890254
Date: 2022.10.31 13:56:08 +04'00'

Տավուշի մարզի Չինչինի միջնակարգդպրոց

Ուսումնական հաստատության դասղեկի
աշխատանքային տարեկան պլան
2022-2023 ուստարի

Դասարան՝ 7 և 9-րդ երկհամակազմ

Դասղեկ՝ Ա. Ադամյան

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)։ 2022-2023 ուտարում 7-րդ և 9-րդ դասարաներում սովորում են 6 աշակերտ՝ 3 տղա և 3 աղջիկ։ Դասարանում ապահովված է փոխադարձ վստահության և բարյացակամության մթնոլորտ։ Աշակերտները ակտիվ են, նախաձեռնող և ստեղծագործաբար են վերաբերում դասարանի աշխատանքներին։ Աշակերտները հարգում ու սիրում են միմյանց, պատրաստ են օգնել իրար ցանկացած հարցում։ Կայացնում են միասնական որոշումներ, հարգումեն ընկերների իրավունքները։

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում։ Հրավիրել ծնողական ժողովներ, կահավորել դասարանը, հետևել մաքրությանը, փորձել նորովի աշխատել,գտնել և կիրառել դասավանդման այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ դասավանդման պրոցեսը դառնա հետաքրքիր և արդյունավետ։ Զարգացնել ստեղծագործական ունակությունները, հնարավորություն տալ գործնականում կիրառել ստացած գիտելիքները։ Ծնողների հետ տանել այնպիսի աշխատանքներ, որ նրանք աջակից դառնան դասղեկին թե՛ կազմակերպչական, թե՛ ուսումնադաստիարակչական հարցերում։

3.Հայեցի դաստիարակություն։

3.1.Հոգևոր դաստիարակություն։ Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, կարևոր իրադարձություններին, ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, պատմել հայ ազգի, նրա մշակույթի, եկեղեցու և կրոնի մասին։ Կազմակերպել զրույցներ՝ հոգևոր մշակույթի նվիրյալների հայրենանվեր գործունեության մասին։

3.2.Գեղագիտական դաստիարակություն։ Գաղափար գեղեցիկի, բարու մասին, զարգացնել երեխայի ճաշակը, ստեղծագործական ակտիվությունը, երևակայությունը։ Զրույցներ վարել հայ մշակույթի, գեղանկարչության մասին, ծանոթացնել ազգային մշակույթի արժեքներին։

3. 3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն։ Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ, նպատակաուղղված, անընդմեջ,համակարգված գործընթաց է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական , քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը։

3.3.Ֆիզիկական դաստիարակություն։ Զրույցներ ֆիզկուլտուրայի դերի ու նշանակության մասին, դրա կարևորությունն առողջության պահպանման գործում։ Զրուցել նաև սպորտում աչքի ընկած հայ մարզիկների մասին։

3.4.Աշխատանքային դաստիարակություն։ Հետևել դպրոցի ու դասարանի մաքրությանը, փոքր տարիքից դաստիարակել սեր դեպի աշխատանքը։ Հարգել ուրիշի աշխատանքը։ Դասարանում ստեղծել գեղեցիկ անկյուն։

3.6.Բնապահպանական դաստիարակություն։ Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ։ Յուրաքանչյուր երեխա պարտավոր է հետևել շրջակա միջավայրի մաքրությանը։ Պետք է աշակերտների հետ անցկացնել զրույցներ,հաղորդել էկոլոգիական գիտելիքներ,որպեսզի նրանք գիտակցեն, որ բնությունն ազգային-հասարակական հարստություն է և պետք է այն պահպանել և խնամել։

4.Դպրոց-ընտանիք կապը։ Մշտապես կապ ստեղծել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցում անցկացվող միջոցառումներին։ Հրավիրել ծնողական ժողովներ։ Զրուցել օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպման, ընտանիքի և դպրոցի կապի մասին։

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Կատարման ժամկետը	Ուսումն. աշխատանքների բովանդակությունը	Կատարողներ	Նշումներ կատարման շուրջ
Սեպտեմբեր	1.Աշակերտների ուսումնական գործընթացի կազմակերպում : Հակահամաճարակային կանոնների պահպանում : 2.Ծնողկոմիտեի ստեղծում :	Դասղեկ Դասղեկ-աշակերտներ	

	3.Աշակերտների համագործակցության և հմտության զարգացում :	Դասղեկ	
Հոկտեմբեր	1. . Դասարանի սանիտարահիգիենիկ պահանջների պահպանում: 2. Ուսումնական ծանրաբեռնվածության ուսումնասիրություն : 3. Վերահսկողության առաջադիմության ուղղությամբ:	Դասղեկ-աշակերտներ Դասղեկ Դասղեկ	
Նոյեմբեր	1.Համագործակցել աշակերտների ծնողների հետ : 2. Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ:. 3. Մտերմիկ զրույցների անցկացում:	Դասղեկ-աշակերտներ Դասղեկ-աշակերտներ - ուսուցիչներ	
Դեկտեմբեր	1.Հաճախումների և բացակայությունների ուսումնասիրություն : 2.Դասալսումների անցկացման արդյունքների ամփոփում : 3. Աշակերտների ընդունակությունների բացահայտում: 4.Առաջին կիսամյակի ամփոփում:	Դասղեկ Դասղեկ - ծնողներ Դասղեկ	
Հունվար	1. Աշակերտների հմտությունների զարգացում: 2.Անաչառ գնահատել սեփական ձեռքբերումները և թերացումները : 3.Ամենադժվարին իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողության ձևավորում :	Դասղեկ-աշակերտներ Դասղեկ Դասղեկ	

Փետրվար	1.Կազմակերպել քննարկումներ , զրույցներ : 2.Մարդասիրական հայացքի ձևավորում:	Դասղեկ-աշակերտներ - ուսուցիչներ Դասղեկ-	
Մարտ	1.Արտասովոր երևույթների կանխելու նպատակով բազմաբնույթ աշխատանքների կազմակերպում : 2.Օբյեկտիվություն իր անձի և ուրիշների նկատմամբ:	Դասղեկ-աշակերտներ Դասղեկ	
Ապրիլ	1.Կարողանալ լսել , հասկանալ և հետևություններ անել : 2.Աշակերտների ուսումնական հետաքրքրությունների պաշտպանում :	Դասղեկ Դասղեկ	
Մայիս	1.Աշակերտների հարմարվածությունը դպրոցին, դասարանին: 2. .Ուսումնական տարվա ավարտին տարեկան արդյունքների ամփոփում :	Դասղեկ-աշակերտներ	